Այբ
կրթական հիմնադրամ

WRO
WORLD ROBOT OLYMPIAD

Իրականացնենք Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի ազգային փուլում հաղթող թիմի երազանքը

Ի՞նչ

Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա 2022
միջազգային փուլ

Որտե՞ղ

Դորտմունդ, Գերմանիա

Ե՞րբ

Նոյեմբերի 17-19

Ովքե՞ր

Կապանի «Գիտտուն» թիմ
հաղթել է «ՌՀՕ 2022»-ի ազգային փուլում՝ մրցելով 16 թիմերի հետ

Տիգրան Սարգսյան
10 տ.

Հայկ Ստեփանյան
12 տ.

Հայկ Ստեփանյան
10 տ.



Հարություն Դանիելյան
Մարզիչ

«Ես շատ էի ուզում մասնակցել ռոբոտաշինության մրցույթին, որովհետև փոքր ժամանակվանից, երբ հեռուստացույցով ռոբոտներ էի տեսնում, երազում էի, որ մի օր էլ ես ռոբոտ կստեղծեմ: «Այբ»-ի ռոբոտաշինական մրցույթների մասին իմացել եմ իմ մարզիչից՝ ընկեր Հարութից, և որոշել եմ անպայման մասնակցել: Ամենաշատը մրցույթի ընթացքում սիրում եմ ռոբոտների համար նոր մեխանիզմներ մշակելն ու դետալներ դնելը: Այս տարվա ՌՀՕ-ին մենք թիմով երկար էինք նախապատրաստվել և շատ էինք ուզում, որ հենց մեր թիմը հաղթի ու հաղթանակով վերադառնանք Կապան: Հիմա էլ երազում եմ, որ Դորտմունդից հաղթանակով վերադառնանք Հայաստան»:

Ինչպե՞ս

ՌՀՕ միջազգային փուլին մեր մասնակցությունն ապահովելու համար անհրաժեշտ է **9000 եվրո**, որը թույլ կտա ՀՀ 6 անձից կազմված պատվիրակությանը ներկայացնել մեր երկիրը Գերմանիայում: Գումարն ուղղվելու է ավիատոմսերի, վիզայի, ապահովագրության և կեցության ապահովմանը:

Ինչո՞ւ

ՌՀՕ-ի միջազգային փուլին մասնակցությունը մեկ քայլով կմոտեցնի հայ երեխաներին իրենց երազանքին, իսկ Հայաստանը՝ ավելի տեխնոլոգիական և նորարար երկիր դառնալու տեսլականին: Մեր աշակերտները կկարողանան էլ ավելի զարգացնել իրենց ռոբոտաշինական հմտությունները, ինչպես նաև կընդլայնեն իրենց ռոբոտի հնարավորությունները:

ՌՀՕ-ի ազգային փուլը կազմակերպվում է «Այբ» հիմնադրամի կողմից 2016-ից ի վեր ամեն տարի: Լեգոկրթությունն այս 7 տարիների ընթացքում վերածվել է մեծ շարժման, որն իր շուրջ համախմբում է բազմաթիվ ռոբոտասերների՝ ոչ միայն մայրաքաղաք Երևանից, այլև մարզերի (Ծիրակ, Լոռի, Սյունիք, Կոտայք, Տավուշ) մեծ ու փոքր համայնքներից: